ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՄՄՀ-ՄԱ-ԱՊՁԲ-25/24

ք. Մասիս « 09 » հունվարի 2025թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյանի, ով գործում է համայնքի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **279 800 (երկու հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկՎաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մասիսի համայնքապետարան ք. Մասիս, Կենտր. Հրապարակ թիվ 4 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900 432131 044 ՀՎՀՀ 04240324	«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ ՀՀ, Երևան, Դավիթ Մալյան 43 <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2050822007881001 ՀՎՀՀ 00009253
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«09» հունվարի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ՄԱ-ԱՊՁԲ-25/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/Հ	CPV	Ապրանքների անվանումները	Չափի միավորը	Մեկ միավորի գինը	Քանակ	Տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագիրը
1	2	3	4	5	6	7
1	22111200	Տպագրված գրքեր	հատ	Ըստ ցանկի	Ըստ ցանկի	Ներկայացված է կից ցանկով

ՑԱՆԿ

Գրքերի ձեռքբերման

Հ/Հ	Ավերնագիր	Հեղինակ	մ/ա ՀՀ դրամ	քանակ	ընդ. Գին ՀՀ դրամ	լեզու	ISBN	տարեթիվ	էջ. Քանակ	կազմ	չափ
1	Սուրբ ծննդյան երգը	Չարլզ Դիքենս	2640	2	5280	հայերեն	978-9939-972-56-5	2024	160	կոշտ	16▨5 x 24 սմ
2	Սուրբ ծննդյան պատմություններ (տասնվեց հեղինակների ստեղծագործություններ՝ հեքիաթներ և պատմվածքներ)	կազմեց և հրատարակության պատրաստեց Դավիթ Սամվելյանը	4000	2	8000	հայերեն	978-9939-969-49-7	2023	344	կոշտ	16▨5 x 24 սմ
3	Նիկոլաս Սփարքս / Հաշվելով հրաշքները	Նիկոլաս Սփարքս, անգլերենից թարգմանեց Նաիրա Քերոբյանը	3520	2	7040	հայերեն	978-9939-972-77-0	2024	424	կոշտ	14.5 x 20 սմ
4	Թեոդոր Դրայզեր / Ֆինանսիստը	Թեոդոր Դրայզեր	4720	2	9440	հայերեն	978-9939-972-58-9	2024	752	կոշտ	14.5 x 20 սմ
5	Աշխարհների պատերազմը	Հերբերտ Ուելս, թարգմանիչ՝ Ալվարդ Սահակյան	3120	2	6240	հայերեն	978-9939-972-55-8	2024	232	կոշտ	14 x 20 սմ
6	Մարկ Լևի / Իսկ եթե դա ճիշտ էր...	Մարկ Լևի, թարգմանեց Թերեզա Ստեփանյանը	3520	2	7040	հայերեն	978-9939-969-94-7	2024	288	կոշտ	14 x 20 սմ
7	Էրիխ Մարիա Ռեմարկ / Անուրջների օթևանը	Էրիխ Մարիա Ռեմարկ, թարգմանեց Նարինե Թադևոսյանը	3920	2	7840	հայերեն	978-9939-972-89-3	2024	200	կոշտ	14.5 x 20 սմ
8	Հեկտոր Մալո / «Այուզան», «Օրիորդ Կլիֆտոն»	Հեկտոր Մալո, ֆրանսերենից թարգմանեց Թերեզա Ստեփանյանը	3920	2	7840	հայերեն	978-9939-75-940-1	2023	312	կոշտ	17.5 x 24.5 սմ
9	Մոռացված երկրի զանգերը	Դավիթ Սամվելյան	2640	2	5280	հայերեն	978-9939-972-84-8	2024	176	կոշտ	14 x 21 սմ
10	Թեոդոր Դրայզեր / Ջենի Գերհարդ	Թեոդոր Դրայզեր	4000	2	8000	հայերեն	978-9939-75-861-9	2022	504	կոշտ	14.5 x 20 սմ

11	Ալեքսանդր Վոլֆի ուրվականը	Գայտո Գազդանով, թարգմանիչ՝ Գրիգոր Ֆերեշեթյան	2320	2	4640	հայերեն	978-9939-972-87-9	2024	168	փափուկ	13.5 x 19 սմ
12	Քսենոփոն / Կյուրոպեդիա	Հին հունարենից թարգմանությունը, նախաբանը և ծանոթագրությունները՝ Սիմոն Կրկյաշարյանի	3520	2	7040	հայերեն	978-9939-972-33-6	2024	408	կոշտ	14.5 x 20 սմ
13	Ժորժ Սիմենոն / Կոմիսար Մեգրե / Լատվիացի Պետերը	Ժորժ Սիմենոն, ֆրանսերենից թարգմանեց Ալինա Սանամյանը	2640	2	5280	հայերեն	978-9939-75-901-2	2022	168	փափուկ	14.5 x 20 սմ
14	Ժորժ Սիմենոն / Կոմիսար Մեգրե / Իմ ընկեր Մեգրեն	Ժորժ Սիմենոն, ֆրանսերենից թարգմանեց Ալինա Սանամյանը	2640	2	5280	հայերեն	978-9939-969-41-1	2023	176	փափուկ	14.5 x 20 սմ
15	Ժորժ Սիմենոն / Կոմիսար Մեգրե / Մեգրեն և անգլուխ մարմինը	Ժորժ Սիմենոն, ֆրանսերենից թարգմանեց Նվարդ Վարդանյանը	2640	2	5280	հայերեն	978-9939-972-23-7	2024	176	փափուկ	14.5 x 20 սմ
16	Աննան Արքայազնի կղզում / «Աննան Ավոնլեայում» համաշխարհային բեսթսելերի շարունակությունը	Լուսի Մոդ Մոնթգոմերի, թարգմանեց Հայկանուշ Շարուրյանը	3520	2	7040	հայերեն	978-9939-972-20-6	2024	344	փափուկ	14.5 x 20 սմ
17	Ագաթա Քրիստի / Որսալով ալիքը	Ագաթա Քրիստի, թարգմանեց Շուշան Փայտյանը	3120	2	6240	հայերեն	978-9939-40-000-6	2024	280	փափուկ	14.5 x 20 սմ
18	Ագաթա Քրիստի / Տարեկանով լի գրպան	Ագաթա Քրիստի, թարգմանեց Քրիստինե Չիլինգարյանը	3120	2	6240	հայերեն	978-9939-972-64-0	2024	272	փափուկ	14.5 x 20 սմ
19	Տունը, որտեղ... Գիրք 1. Ծխամոլը	Մարիամ Պետրոսյան, ռուսերենից թարգմանեց Մարգարետ Ասլանյանը	3920	2	7840	հայերեն	978-9939-75-906-7	2023	344	կոշտ	14.5 x 20 սմ
20	Տունը, որտեղ... Գիրք 2. Շնագայլի ութօրյակ	Մարիամ Պետրոսյան, ռուսերենից թարգմանեց Մարգարետ Ասլանյանը	3920	2	7840	հայերեն	978-9939-969-35-0	2023	344	կոշտ	14.5 x 20 սմ
21	Տունը, որտեղ... Գիրք 3. Դատարկ բներ	Մարիամ Պետրոսյան, ռուսերենից թարգմանեց Մարգարետ Ասլանյանը	3920	2	7840	հայերեն	978-9939-972-24-4	2024	432	կոշտ	14.5 x 20 սմ
22	Դեռահասների ամենաարդյունավետ 7 սովորությունները	Շոն Քովի, թարգմանիչ՝ Էլիզա Սարգսյան	4000	2	8000	հայերեն	978-9939-75-668-4	2021	296	կոշտ	16▨5 x 24 սմ
23	Էդուարդ Խաչիկյան. Սարգիս Զորավար (պատմավեպ)	Էդուարդ Խաչիկյան	3120	2	6240	հայերեն	978-9939-969-70-1	2024	288	կոշտ	14.5 x 20 սմ

24	Ինքնություն / Գարեգին Նժդեհ: «Էջեր իմ օրագրից», «Բաց նամակներ հայ մտավորականությանը», «Խոսք հայ երիտասարդությանը», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Ցեղի ոգու շարժը», «Բանտային գրառումներ», «Խուստուփյան կանչեր»	Գարեգին Նժդեհ	3200	2	6400	հայերեն	978-9939-75-883-1	2022	352	կոշտ	14.5 x 20 սմ
25	Ինքնություն / Փավստոս Բուզանդ: Հայոց պատմություն	Փավստոս Բուզանդ	3200	2	6400	հայերեն	978-9939-75-868-8	2022	336	կոշտ	14.5 x 20 սմ
26	Ինքնություն / Մովսես Խորենացի: Հայոց պատմություն	գրաբարից փոխադրումը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի	3200	2	6400	հայերեն	978-9939-969-42-8	2023	358	կոշտ	14.5 x 20 սմ
27	Արկածային գրադարան / Մոնթեսումայի դուստրը	Հագարդ Հենրի Ռայդեր, թարգմանեց Հարություն Հարությունյանը	4000	2	8000	հայերեն	978-9939-969-78-7	2024	528	կոշտ	14.5 x 20 սմ
28	Գրեգորի Դիլ / Ամեն ոք ձեռներեց է (Տնտեսական ազատության իրացումը հետխորհրդային երկրում)	Գրեգորի Դիլ, անգլերենից թարգմանեց Տաթև Սահակյանը	3120	2	6240	հայերեն	978-9939-75-931-9	2023	304	կոշտ	14.5 x 20 սմ
29	Մշակույթի հայ հայտնիները: Կոմիտաս. արվեստագետն ու նահատակը (Komitas: Tha Artist and the Martyr)	Սերժ Մոմջյան, անգլերենից թարգմանությունը Անի Պետրոսյանի և Վիկտորիա Գրիգորյանի	3920	2	7840	հայերեն	978-9939-75-984-5	2023	176	կոշտ	16.5 x 22 սմ
30	Մշակույթի հայ հայտնիները: Սոս Սարգսյան. վիպակներ	Սոս Սարգսյան	3920	2	7840	հայերեն	978-9939-969-26-8	2023	320	կոշտ	16.5 x 22 սմ
31	Արամյանց / Կարեն Օհանջ	թարգմանիչ՝ Դավիթ Սամվելյան	3800	2	7600	հայերեն	978-9939-75-540-3	2020	160+16 էջ ներդիր	կոշտ	16.5 x 24 սմ
32	Մուշեղ Գալշոյան / Ձորի Միրոն / Մարութա սարի ամպերը / Ագռավաքար	Մուշեղ Գալշոյան, կազմեց Դավիթ Սամվելյանը	4400	2	8800	հայերեն	978-9939-969-32-9	2023	504	կոշտ	14.5 x 20 սմ
33	Էրիխ Մարիա Ռեմարկ / Երկինքն ընտրյալներ չունի	Էրիխ Մարիա Ռեմարկ, թարգմանիչ՝ Վանուհի Բաղմանյան	3920	2	7840	հայերեն	978-9939-75-481-9	2020	336	կոշտ	14.5 x 20 սմ
34	Էրիխ Մարիա Ռեմարկ / Լիսաբոնի գիշերը	թարգմանիչ՝ Վանուհի Բաղմանյան	3920	2	7840	հայերեն	978-9939-75-608-0	2021	288	կոշտ	14.5 x 20 սմ
35	Յան Մարթել / Պիի կյանքը	թարգմանիչ՝ Շուշան Փայտյան	4000	2	8000	հայերեն	978-9939-75-756-8	2022	424	կոշտ	14.5 x 20 սմ
36	Ընտիր հեքիաթների շարք / Ժողովրդական հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-505-2	2020	88	փափուկ	16.5 x 24 սմ
	Ընտիր հեքիաթների շարք / Անտառային հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-500-7	2020	88	փափուկ	16.5 x 24 սմ

38	Ընտիր հեքիաթների շարք / Զարմանահրաշ հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-508-3	2020	96	փափուկ	16.5 x 24 սմ
39	Ընտիր հեքիաթների շարք / Զվարճալի հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-509-0	2020	88	փափուկ	16.5 x 24 սմ
40	Ընտիր հեքիաթների շարք / Իմաստուն հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-499-4	2020	80	փափուկ	16.5 x 24 սմ
41	Ընտիր հեքիաթների շարք / Կախարդական հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-503-8	2020	96	փափուկ	16.5 x 24 սմ
42	Ընտիր հեքիաթների շարք / Հեքիաթային ճամփորդություն	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-502-1	2020	96	փափուկ	16.5 x 24 սմ
43	Ընտիր հեքիաթների շարք / Ուրախ հեքիաթներ	Կազմեց Նազելի Կարապետյանը	720	5	3600	հայերեն	978-9939-75-506-9	2020	80	փափուկ	16.5 x 24 սմ
44	Խաղացողը / Քըրք Քըրքորյան	Ուիլյամ Չ. Ռեմփել	5000	1	5000	հայերեն	978-0-06245677-9	2018	440	կոշտ	16.5 x 24 սմ

ապրանքների մատակարարման ժամկետը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.02.2025թ.ներառյալ

ԳՆՈՐԴ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտր. Հրապարակ թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 131 044
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, Դավիթ Մալյան 43
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050822007881001
ՀՎՀՀ 00009253

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
կնքված 2025թ. հունվարի «09» ամսաթվի գնումների մասին 25/24 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

1	Ալմոլոգ վիդեոմոնիտորավոր ջոիոզատորավոր հակեիոակ	Ալուրոդիոզ	Նախագիծ	դեկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	սեպտեմբեր	օգոստոս	հուլիս	հունիս	մայիս	ապրիլ	մարտ	փետրվար	հունվար
				279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800	279 800
				Ընդամենը											
				279 800											

*Գները նշված են հարկերով ներառյալ ընդհանուր գումարներ եթե ապրանքները չեն ենթակա հարկման:

Գնումը կատարվում է ՀՀ կառավարության 2017թ-ի դեկտեմբերի 7-ի N 1851-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 3-ի ենթակետի հիմքով:

ԿՈՆՏՐԱԿՏՈՐ

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, Դավիթ Մալյան 43
ԸՆԹ «Հինգերդամի» ՓԲԸ
Հ/Հ 20508220078810 01
ՀՎՀՀ 00009253

Տ.Հ.

/Ռոբերտ Ամիրյան/

ԳՆՈՐԴ

Մասիսի հումանիտարական դպրոցամանկապարտեզ
գ. Մասիս, Հեղնար. Հրամայրի թիվ 4
Հ/Հ ՓՆ գործառնական կարգավիճակով գանձապետական
Հ/Հ 900 432 131 044
ՀՎՀՀ 04240324

Տ.Հ.Հ.

/Ռոբերտ Ամիրյան/